

զոր երբեմն կը զանակեն, բոժոժ-բոժոժ կը հանգուցեն գարնան հեշտ շունչին մէջէն վաղաթառամ ծաղիկներ, վայրի մեղուներու կծիկ-կծիկ խորխախները, քարին իսկ մէջէն յօրինուած:

Ան ալ այցուած է մահուան զգայնութիւններով, քանի որ առանց պատճառի կ'ըսէ.

- Մի ինչ լաւ գերեզման է ատ...

Մտովի կ'ամբողջացնեմ նախադասութեան թելադրանքները: Այդ գեղին մէջ ես մինակ վարժապետ մը չեմ, այլեւ՝ տառապող, ուժմանթիք թափառական մը: Դպրեվանքէն փախուստիս վաստակուած մալարիա մը, Նալովայի ճահճներուն մէջէն, կը շարունակէ զիս հարուածել, աշնան սկիզբները ու իմ զրկալից պատանութեան պակաս թողածը կը դարմանէ, զիս ընելով լեարդէն կրծրւած (զուր տեղը չէ, որ «Անգղիս կտուցիս տակ»ը օր մը բրքոյկի մը անուն եղաւ ինծի) յիմար մը: Չեմ խօսիր հոս կիներէն, որոնք պատանութիւնը կ'աւարտեն ամէն տղու մէջ ու կը ձեւեն մարդը: Ուրիշ տեղ մը թերեւս ինծի տրուի սիրտը այդ փորձարկութիւնները պատմելու: Ամէն երիտասարդ, հեռու հեքիաթին յօրինած միակտուր արարածը ըլլալէ, բարդոյթ (complexe) մըն է անգուշակելի դրութիւններու: Պատմեր եմ մաս մը բան արդէն («Երբ պատանի եմ»):

Մեր առջին, գերեզմանաքարերը, ծալէծալ, համաձայն հողին վէտերուն, կարմիր, մութ-կանաչ ցանցիկներով պիսակաւոր: Ամբողջութիւնը տարօրէն ճնշող, մահուան մէջ ճարուած կարծրութեամբ մը, յստակ՝ յիշեցնելու չափ գեղին մօտիկ միւս քնարանը, զոր ուռիներ կը հովանաւորեն ու մոլեխիւնդերուն թուփերը կը հարսնեւորեն:

Մաթիկ Մելիքխանեան կը կոտրէ ժայռի շերտ մը: Բիւրեղներու հարիւրաւոր աչուկներ:

- Ի՛նչ գեղեցիկ,- կը բղաւէ անիկա ու կը լռէ:

Ամէն քայլի տեսարանը կը պարզէ նոր-նոր կերպարանքներ, անձրեւին բարակ ասեղներովը ճարտարա-